


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պօլիպոլոյ համար  
 Տարեկան ֆր. 10  
 Վեցամսեայ " 5  
 Արտասահման  
 Տարեկան ֆր. 12  
 Վեցամսեայ " 6  
 ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք ետ չեն տրուիր:

Հասցէ  
 DIRAN PAPAZIAN  
 RUE DRAGOMAN  
 K. STEPAN!  
 (BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Երէ կ'ուզեմ "Հայեցի"իս մեջ աղօտ երեւնալ.

Պարսիք սիրուն եւ սզնիս դեմք մը ունենալ:

1900

ՀԱՅԵՆԻ նոր տարւոյ առթիւ իր ազնիւ երկանա ընթերցողները շնորհատրեւով կը մաղթէ անդորր կեանք և անխառն երջանկութիւն:



ԲՈԺՈԺԻԿԻ ՄԱՂԹԱՆԲԸ

"Հա՛, Բոժոժիկն ե՛", քսիք խնդացիք  
 Զգեցիք քա՛ն, քա՛ն,  
 Անե՛ն անգամ որ Հայեցիս առիք  
 Հի՛, հի՛, կա՛ն հա՛, հա՛:  
 Յար քաժիկն ինկա՛ւ Զեզ խիկն անխառնակ.  
 Իսկ քարքն usուր ցաժ  
 Եզի մունչեամբ իւրազանիս սակ  
 Գոյեց ու գոռաց:

Հացեց պոռոտք, կասաղեց մոյիկն  
 Էջի ճաղկեցի,  
 Իրա՛ւ մի ինչ կապ չաշրախայ գալլիկն  
 Բերնիկն դրեցի:

Այդ պարսէր նորէն  
 Կրնակս առած  
 Նոր սարոյս սեւե՛ն  
 Զեզ մաղթե՛մ անչաց  
 Ժպտուն քաղդաւոր  
 Նոր սար/ւ, նոր օր:

ԲՈԺՈԺԻԿ

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարին բոլորեցաւ. չը կայ բան սը, որ նոր տարին հետ նորութիւն բերէ այս մարտիրոս ժողովուրդին, որ անյիշատակ վարերէ ի վեր կը տառապի երբեմն օտար իշխանութիւնց ու շատ անգամ այ ինք իր լուծիններբէ:

Շատ լաւ գիտեմ, որ Հայ խմբագիրներ ուղեզ պիտի ճախնցնեն այսօր վաղը հինին վրոյ տեսութիւն մը պարզելու և նորին հաւմար ուղղութիւն մը գծելու: Պարտապա՛ն... շատ շատ բանի մը ստիստական մըլած վարգապետութիւններու հետ հիւսիսի ցուրտ հայհոյութիւններու նմոյշը պիտի տրուի մեզ նորէն ու ամեն ինչ վերսկսի ստեղծուիլ ինք իրմով և կազմալուծուիլ ինք իրմով նման այն տեսուր դէպքերուն, որոց դժբաղդ ողբերգուն եղանք տարիներու երկար շարքի մը մէջ

Մէկը՝ «կեցի՛ր» պիտի ըսէ, մէկը՝ «ետե՛» մէկը՝ «առաջ» ու այս բառերուն խառնակութեան մէջ պատրաստուած արաբական թանապուրը պիտի հրամցուի նորէն խեղճ ժողովուրդին, որ անսուշ կը մեռնի թէ օտար աստղերու տակ և թէ մայր հայրենիքի մէջ բարոյապէս ու նիւթապէս:

Կանոնաւոր և ընդհանուր մէկ գծի վրոյ կուտիլը մեր պաշրպօզուրդ ահագիրաներուն համար ազգագիրտական յայանի սխալ մըն է. ընդհակառակը՝ անկանոն, աննպատակ և աղան

ֆեհեթներ իր ճիւղան կարիքները կարմիր գաշ-  
տը առաջնորդելով, հոն, ժողովուրդին մերթ  
ընդ մերթ արեան լոգանքներ հրամարտները  
ապագիտութեան ամենավերջին հրաշալիքն  
է: չը նայելով, որ Պրոպագանդիստ աւագանէն  
չատ աւելի ամուլ այդ լոգանքներ արիւնոտ  
սրբուկներ արտագրելէ զատ ուրիշ ոչինչ օ-  
գուտ չեն ունենար:

\* \*

Այո՛, գիտեմ, որ Գրոջակ՝ նոր տարիի սե-  
մին վրայ —ինչպէս կըսեն պատուելի՝ բան-  
աստեղծները— յառաջ պիտի պոռայ կոկոր-  
դալիս ու իր ետեւ պիտի գտնէ շատ մը անձ-  
նուրաց կարիքներու հետ խաչագողներու բա-  
նակ մըն ալ, ամենքն ալ պատրաստ իւրա-  
քանչիւրը՝ իր զգացման համեմատ, կամ ար-  
իւն թափելու և կամ արիւն քամելու:

Եւ ժողովուրդը պիտի լայ թէ այդ կարիք-  
ները որոնք կը մեռնին իրեններուն հետ և  
թէ աւա՛ղ այդ խաչագողները, որոնք դեռ  
կապրին իրեններէ վերջ ալ . . . :

\* \*

Հնչակ՝ իր տարիներու քունէն արթնցած  
և ընկերվարական լայն հիմքերու վրայ գուցէ  
վիթխարի մարմնով մըն ալ ծանրացած, «ընդ-  
հանուր ապստամբութիւն պէտք է» պիտի  
գոչէ, եւ այս մեծ գործին համար պէտք ե-  
ղած զրամական ուժին տիրանալու նպատա-  
կաւ պիտի սկսի ծրագիրներ սարքել ու թող  
տալ տեղ մը անպիս, տեղ մը անմօրուս, ու-  
րիշ տեղ մըն ալ քոսոտ բրդականտիսներու  
որովայնէ ընտրեալ ջոկատ մը, որ ալ պիտի  
սկսին լեզու կտրիլ ու Հնչակին հին փառաց  
վերջուշուժով օգային զգեականներ շինել ու  
պրախշել ժողովուրդին:

Եւ ինքը՝ Հայ ժողովուրդը պիտի լայ այս  
եղերական նուազուրդն ալ, ուր իր միսն  
ու ոսկոր կը ծոխուի պէղիչ Նալարբէգի և  
կամ անոր անպատկառ ձագուկներուն ձեռ-  
քով . . . :

\* \*

Մարտը՝ յաւիտենական զինագաղարի այդ  
կուսութեթը (հակասութիւնը իմա չէ՛) «կե-  
ցէք» պիտի պոռայ, «քաղաքականութիւնը  
զբաղուած է Ափրիկեան գործերով. 1900ի  
արուեստահանութեան տիեզերական տօն մըն է,  
ուր ամփոփուած է ամեն քաղաքագետի ու-  
շագրութիւնը. ուստի ժամանակ չէ՛ կուտելու»:  
Իր վարիչներէն մէկը Միսիսիփէն Նեղոս,

Նեղոսէն Թայմզ պիտի նետուի, միւսը Փ-  
րաւոնի երկրին ու Ալպիոնի զաւակներուն մի-  
ջեւ բայեկի պէս բան մը պիտի ըլլայ. կեդ-  
րոնը իրենները և այս վերջիններն ալ կեդ-  
րոնը չը պիտի հասկնան: ԾՅի անմուտանալի  
օրերուն հերոս վարիչներէ ոմանք երբեմն  
Պիւլպիւլի Ճվլուժներուն գերին դարձած՝ քա-  
ղաքներու թագուհիին գիրկը հազարուձէկ ան-  
խոստովանելի հրապոյրներով զգլխելնուն հա-  
կառակ, հիմա պիտի սկսին արծիւի աչքերէն  
նեղուիլ և ոմանք ալ՝ եթէ շիտակ է այն են-  
թագրութիւնը թէ հիմակու հիմա Հայ յեղ-  
կուսակցութեանց ամենէն զօրաւոր արեւը  
Գաշնակցութիւնն է, պիտի սկսին իրենց խը-  
րոխտ գլուխները արեւածաղիկներու պէս դէպ  
ի Գաշնակցութիւնը ծուլ եւ պոռոտ ապա-  
չաւով մը «Ես մեղաւորս» երգել:

Սուրն ու սուին մէկդի նետուած, Մարտէն  
վերջ նոր կեանք բաշխող գրչի զինւորներ նո-  
րէն պիտի գտնեն Զանկիւլեանի պէս մարդիկ-  
ներ աւտուածացնելու և միեւնոյն ատեն բան-  
թօֆլաճի ապուշ մը ընելու գանի. նորէն պի-  
տի գտնեն առիւծ Զէյթունցիին պիակին պէս  
պիակներ և պիտի ըսեն անոր թէ սոխ ու  
սխտոր բսցիր քու աչքերուդ լալու համար,  
չը նայելով որ իրենք արցունքով լղրճկուած  
հաշակաւոր մեղայաբէրի մը զիւցապներն են ու  
առանց սոխ ու սխտորի լացած են Նազըմին  
առջև . . . : Այո՛, պիտի գտնեն Զաքէոսներ  
և անոնց օղիի բաժակին պիտի նախանձին,  
չը նայելով, որ իրենք եւստն թէ քոռոտն  
անոր տակաւին մէջ կը խեղդուին արդէն:

«Առատ դրամ ունինք» պիտի ըսեն ու ի-  
րենց գլտորտուժներուն համար իսկ պէտք ե-  
ղած ձամբու գրամը չը պիտի ունենան պատ-  
րաստ: «Սուր աչք ունինք» պիտի ըսեն ու  
իրենց հանդէպ ժողովուրդին ցոյց տուած այս  
գործնական սաւնութիւնը չը պիտի տեսնեն:

Ու ժողովուրդը պիտի լայ թէ Լ. Մ.ի պէս  
պատուական երիտասարդներ, որոնք գիպուա-  
ծին մէկ անհամ խաղովը ընկեր կղեր են կու-  
կորպիտներու և թէ սոյն կամուար խըւ-  
թիւնն ու կուրութիւնը, որով կուզեն առաջ  
մղել ժողովրդային ահագին գործ մը որուան  
յարմար և ընթացիկ վարդապետութիւննե-  
րու կեղծ իւրացումով:

Պանիրը աղէկ. բայց ի՛նչ օգուտ, ամա՛նը . . . :

\* \*

Է՛ ընթերցող, գիտեմ՝ շատ տխուր են  
այս մարգարէութիւններ որոց ընթերցումը հա-

ձոյք չը պիտի պատճառէ մնալ : Զուարճա-  
լիներ ալ կան սակայն եւ 1900ի յոռետես  
գուշակը կը խոստանայ ժօտաւորապէս ատնց-  
ձով ծիծաղեցնել զբեզկ կերպով մը մեզմա-  
ցընել այսօրուան տխուր տպաւորութիւնը :

Փ. ՊՈՒԻՍ

ԳՈՒՇԱԿ

### ԱԶԳԱՅԻՆ

Ելմասկան նախարարութեան կողմէ հինգ-  
շաբթի օրը Պատրիարքարանի Ա. գործակա-  
տարին յանձնուեր է տասը հազար զրշ. ի  
հաշիւ Ա.զգ. Պատրիարքարանի :

— Պուլկարիոյ այցելու հովիւ Գեր. Բար-  
թուղիմէոս Ծ. Վ. Պաղճեան այս շաբթու  
Շուվայէն Վառնա ժամանեց :

— Կը լսենք թէ Վառնայի մէջ Աշքատա-  
խնամ ընկերութիւն մը պիտի կազմուի . . . ձը-  
մեւը անցնելէն ետքը :

### ՆՈՐԱԳՈՅՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Թիֆլիզի երկրաշարժին

Թիֆլիզի շրջակայքը պատահած երկ-  
րաշարժը փնասեր է 13 քիւղերու , որոնց [ճը  
բոլորովին կործաներ են : Մեռեալներու թի-  
ւը մինչև հիմա ութ հարիւրի կը հասնի :

Երկրաշարժը պատահեր է դեկտ 19ին,  
կէս օրը 55 վայրկեան անցած և տեւեր է  
տասը երկվայրկեան : Ցնցումը բաւական զօ-  
րաւոր ըլլալով երեք անգամ կրկնուեր է :  
Թիֆլիզէն գատ ցնցումները զգացուեր են նա-  
եւ Պաթումի և Ալէքսանտրաքօլի մէջ : Վը-  
նասը շատ մեծ է , տակաւին քանակութիւնը  
ճշգուած չէ :

### Պուլկարիոյ Եղեւնոսֆը

ՍՕՖԻԱ. — Սօպրանիէն ընդունեց-բո-  
լոր ելմտացոյցերը , ծախքերու մէջ կարգ

մը զեղչեր ընելէ ետքը : Պատերազմա-  
կան նախարարութեան ելմտացոյցին  
համար , որուն համար ընդհ. ծախքե-  
րէն 800,000 ֆր. զեղչուած է բաղդատ-  
մամբ նախորդ տարեշրջանին , որոշուե-  
ցաւ հարիւրին եօթը զեղչ մը ընել ըս-  
պաներու ամսաթոյակէն մինչև գնդա-  
պետի աստիճանը :

Հարիւրին վեց տոկոսով կառավա-  
րութեան և պանքաներու ներկայացու-  
ցիչներու միջեւ կնքուած պայմանա-  
գրութեան մէջ 30 միլիոն ֆր. նշանա-  
կուած է փոխառութեան գումարը և ոչ  
թէ 25 միլիոն , ինչպէս ծանուցուած էր :  
Պարտաթուղթերը հինգ տարիէն բոլո-  
րովին պիտի հատուցուին : Պանքաները  
իրենց վրայ պիտի առնեն 25 միլիոն  
ֆր.ի փոխառութեան հրապարակ հան-  
ուիլը՝ հարիւրին 89 գինով : Միախոտի  
աուրքը որ այդ փոխառութեան հա-  
տուցմանը յատկացուած է , տարեկան  
տասը միլիոն ֆր. կարտադրէ :

### Կ Ա Ղ Ա Ն Դ Չ Ք

ԱՌ ԽԱԶԱԳՈՂԱՍ



### ՄԱՐԾ ԽԱԶԱԳՈՂԱԿԱՆ

Հեղինակութիւն բոժոժիկի.

Երաժշտութիւն Գերմանացի հռչակաւոր  
երաժիշտ միւսիւ Հօֆման, Բիւֆման, Եուսմանի :

Օն անդր յառաջ ,  
Յառաջ , յառաջ ,  
Ատըմընը ա՛յ ,  
Մի ձախ մի յաջ .  
Հապօն յառաջ ,  
Սաղտան սօլտան  
Զըրբարազ գա՛յ ,  
Խաչագողը քա՛յ :

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՅԻԹԻՒՆ ՄԸ

Լոնտոնէ մեկնող կառախուժքի մը վա-  
կոններէն մէկուն մէջ երկու անձանօթ ճամ-  
բորդներ դէմ առ դէմ նստած էին: Անոնց-  
մէ մին բաւական կոկիկ ու վայելուչ հագ-  
ուած կին մըն էր, իսկ միւսը Անկոնիէն մը:  
Կառախուժը ճամբայ ելլելէն քիչ վերջը ե-  
րիտասարդը ուղեկից կնոջ դառնալով կը խնդ-  
րէ որ քանի մը վայրկեանի համար պատուհա-  
նէն դուրս հանէ զլուխը, յայտնելով որ կա-  
ռախուժքին հասնելու համար վազել ստիպ-  
ուելով՝ չէր կրցած իր հագուստները ամբող-  
ջապէս հագնիլ, և կուզէր հիմա վրան գլու-  
խը շտկիլ: Կինն առանց առարկութեան՝ դե-  
պի պատուհանը կը դառնայ: Քանի մը վայր-  
կեան ետքը, երբ գլուխը ասդին կը գարձնէ,  
կը տեսնէ որ նախկին ճէնդլմէնը տարօք կըն-  
կան մը փոխուած է: Տիկինն առանց ձայն  
հանելու ճամբան կը շարունակէ: Բաւական  
ժամանակ անցնելէն ետքը կարգը տիկնոջ կու  
գայ խնդրել որ ձեռք ճանապարհորդակցէն  
սր ինքն ալ քիչ մը հաճի գլուխը պատուհա-  
նին դարցնել, որովհետեւ կըսէր «Ես ալ կա-  
ռախուժքին հասնելու համար շտապելուս՝ ար-  
դուզարգիս մէկ մասը պակաս թողուցի»: Այ-  
լակերպեալ տիկինն առանց առարկութեան  
գլուխը քնդին կը գարձնէ: Բայց այս ան-  
գամ վարձանալու կարգը իրեն կուգայ, երբ  
մէկ—երկու վայրկեան ետքը կը տեսնէ որ  
քիչ մը առաջուան նորատի կինը կատարեալ  
և բնական: . . ճէնդլմէնի մը փոխուած էր:  
Ա. որ ձեռքը, առանց շփոթելու սուր բրբիչ  
մը արձակելով կըսէ — «Տիկին . . . Պարոն . . .  
կերեւի թէ երկուքս ալ արհեստին մէջ շատ  
ճարպիկ ենք, ուստի լաւ կըլլայ որ իրարու  
ծանօթանանք: Ես պարտաւորուած էի կեր-  
պարանքս փոխել, որովհետեւ քանի մը օր ա-  
ռայ գրամատուն մը կողպտելուս համար՝ ու-  
տիկանութիւնը ետեւէս ինկած կը հալածէ  
զիս: Այս միջոցը փայլ ձեռքէն ազատելու  
համար: Իսկ դ՞ուր, ի՞նչ քրիք:

— Ե՞ս, կըսէ նորապարձ ճէնդլմէնը, ու-  
քի ելլելով ու գրպանէն թիփովէր մը հանն-  
լով, ես բան մը ըրի, միայն թէ պաշտօն  
ունենալով փնտաւել այն գրամատան կողպ-  
տիչները, այս միջոցին գիմեցի, ուրիմն յա-  
նուն օրինաց անձնատուր եղէք:

Աւելորդ է ըսել թէ կնոջ կերպարանքով  
ծպտեալ Պարոնը ոստիկանութեան մէկ պաշ-  
տօնեան էր:

ՀԱԿԱԼՔՈՒԱԿԱՆ ՇԻՃՈՒԿ

Գինեմուլի տիրոււրտանքին աչքե-  
րը լոյս . վերջապէս գինեմուլութեան  
ստակալի ախտին դարմանն ալ փոնուե-  
լու վրայ է:

Գարէլիէ և Թէպօ անուն բժիշկներ-  
ը այս անգամ Բարիլի Բժշկական Ա-  
կադէմիան պաշտօնապէս հաղորդած  
են իրենց մէկ նոր գիւտը: Ասոնք Պր-  
քօքս դեզագործին աշխատակցութեամբ  
բը գտեր են հակալքօլական շիճուկը  
(սէնթիմ ալթօլիֆ) որուն փորձերը ընե-  
լով յաջող արդիւնք ունեցեր են:

Այդ շիճուկը որ Բասթօրեան դը-  
րութեան համեմատ նախապէս ոգելից  
ըմպելիքի գործածութենէ հիւանդացած  
ձիւի մը երակներէն կը հանուի, կերակ-  
թէ այնպիսի ալքեցութիւն մը կունե-  
նալ ոգելից ըմպելիք գործածողներուն  
վրայ, որ այդ տեսակ ըմպելիքներէն  
բոլորովին զրուանք մը կը պատճառէ  
իրենց:

Եթէ ճիշդ է այդ գիւտի մասին ըս-  
ուածը—և քիչ ատենէն կիմացուի ան-  
շուշտ, որովհետեւ բժշկական Ակադէմիան  
յատուկ յանձնաժողով մը կազմած է  
զայն քննելու համար—, մեծ գիւրու-  
թիւն մը կընծայէ գինեհատներու ըն-  
կերութեան ջանքերու և մարդկութիւ-  
նը կազատի իր ստակալի թշնամիներէ  
մէկէն ալ:

1900 ՄԷՆԸՍԻՆԷ ՄԱԽՍՈՒՍ

# ԲՈԹՈԹԻԿԻՆ ԳԱԶԱՄԻԱՍԸ



Էյ Հիւրմէթ լիւլէր,

Չօգ լարընըլըն արդուսու իւզ-  
րէ, իշպու Գազամիայր սիզլէրէ  
թապտիմ խտէյորըմ: Սայիր գա-  
զամիալար կիպի պաշըմըզտան  
եօգարը օլուն շէյլէրի քէշֆէ գալ  
գըշմայըպ, (մէսէլա, կէօք եիւ-  
զիւնտէ պիր սիեան պուլաթ կէօրիւ-  
նիւեօր ամա, եազմսը մը կէլէճէք, եա-  
խօտ սու գըթըլըլըմը օլաճագ կիպի մա-  
լիխիւիալարը պէրթարաֆ խտէրէք) սէ-  
նէի հազըրէտէ իճրասը գարարաշտը-  
րըլմըշ վուգուաթլարը նէշը խտէճէիմ:  
Իշթէ պու սէպէպլէ տիւրպիւնիւմի եէրէ  
տօզրու շէվիրմիշիմ տիր: Քէշֆիլյաթըմ-  
տա պիր սէնվ վուգու պուլունուր իսէ,  
ալէնի սուրէթտէ քարսօն տիլէյէճէկիմի  
շիմսիտէն պէյան խտէրիմ: ԲՈԹՈԹԻՎ

Չօգ ինսանլար տիւնեայա կէլիպ,  
չօգլարը տա օ պիր տիւնեայա կէօշ ի-  
տէճէքլէր տիր:

Հէր էվտէ աղ չօգ գարը գօճա խը-  
րըլթըլարը էքսիքսիզ օլուպ, պու սայն-  
տէ ֆարըճըլարըն սէրմայէլէրի արթա-  
ճագ տըր:

Պու կիւն եըլպաշը օլմագ մէնա-  
սիպէթիլէ գահվէխանէլէրտէ գումար  
մասալարը քիւշատ օլունուպ, բէք չօգ-  
լարը քէսէլէրինտէ մէվճուտ օլուն բա-  
րալարընը ազըլարը կիպի զայպ խաուպ  
միւթէէսիր օլաճագլար վէ արբաճը  
գումրուսը կիպի տիւշիւնէճէքլէր տիր:

Պու միսիլլիւլէր խանէյէ ավտէթլէ-  
րինտէ հիտտէթլէրինի այալ ու էվլաա-  
լարընսան ալաճագլար:

Եարատըլլարընա պէյէնմէյուպ, եիւզ-  
լէրինի պոյա ֆաթուլասընա շէվիրէն  
պատընլարըն տիշլէքի կիտէրէք գարա-  
բաճագ վէ եիւզլէրինին տէրիլէրի աա-  
վուլ կիպի կէրիլէճէք տիր:

Ազնուաշուքուհի գատընըն պիրի գօ-  
ճասընըն տաշրատա պուլունուղունու  
ֆրասաթ առա իտէրէք մապէլի պիր  
պալոյա կիտէճէք, օրատա պիրա իլէ  
գաֆայը տիւմանլատըպ թանրոզ պի-  
րիսինէ եագայը էլէ վէրէճէք, վէ քիմ-  
սէյէ պիր շէյ սէյլէմէմէք իշիւն՝ ալ-  
թուն սաաթընը մէրգումա հէտիլէ վէ-  
րէճէք տիր: Գօճասընըն ավտէթիւնտէ՝  
«Ծնունդուն խթում կէճէսի ժամա կի-  
տէր իքէն սաաթըմը տիւշիւրմիւշիմ՝  
տէյուպ պիր գաշ տամլա կէօզ եաշը  
տէօքէրէք: Գօճասընը մէրհամէթէ կէ-  
թիւրիպ, պիր պաշգա ալթուն սաաթ ալ-  
տըրաճագ տըր:

Պիր թագըմ էհլի քեամիլ էսնաֆ-  
լար թօք աթըպ թիւճարըլա գարար  
վէրէճէքլէր տիր:

Ժամատա ալլայարադ աղթք իտէն  
բարեպաշտ վէ մարդասէր սարաֆըն պի-  
րի պիր թագըմ ֆագըր ֆուգարայա  
եիւզտէ օն ֆայըլլա վէրմիշ օլտուղու  
բարանըն պիր գաշ միսիլ օլարագ օն-  
լարտան ըհհին ալմըշ օլտուղու միւճէվ-  
հէրաթ վէ սաիր էշեալարը մարդասի-  
բարար տէրճէպ իտէրէք, պիր Եունան-  
լը քէրէստէ կէմիսիլէ Ագ տէնիլէ տօզ-  
րու աշըլաճագ տըր:

Պիր թագըմ եիւզլէրի եումուշագ  
միւսիւլէր իսիմ թէպրիքլէրինէ կէզիպ,  
կիլմիշ օլտուգլարը էսիլ լաստիքլէրինի  
եէնիլէր իլէ տէյիշտիրիպ, արագաբու-  
տան զաքիստ խտէճէքլէր:

Պաղը խանէ սահպլէրինին տիգ-  
գաթըլըլըք սէմէքէսի օլան իշպու խըր-  
սըլըլա մէյտան վէրմէմէք իշիւն պիր  
գաշ միսաֆիրլէր Ս. Յովհաննէս կէճէսի  
պէրապէրլէրինտէ պիրէր թօրպա թա-  
շըլըպ եւնի լաստիքլէրինի օնուն իշին-  
տէ հըֆլ էտիպ եանլարընսա սագլայա-  
ճագլար տըր: Կէօրիւեօրմուսունուզ Գա-  
զամիա պապանըն պուլուշարընը:

(Տէպամի)

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

Հագուստը վայելցնելը դէմքին

Կանայք եթէ կուզեն որ իրենց հան-  
դերձները՝ իրենց գէմքին փափուկ գոյնը ա-  
ւելի պայծառ ցուցնեն, շատ պարզ միջոց մը  
կայ, բաւական է գիտնուլ թէ՛ ո՞ր գոյնը ա-  
ւելի վայելուչ է գէմքի գեղեցկութեան :

Անբժիթ գիտեցէք ձեր գէմքը հայելիի  
մը մէջ, ի նկատի առնելով որ լուսոյ ճառա-  
գայթնները ձեր երեսներուն վրայ ըլլան, և  
երբ կը զգաք թէ ձեր աչքերը կը մթափնին,  
ձեր նայուածքը անմիջապէս ուղղեցէք ըսպի-  
տակ նիւթի մը վրայ, օրինակի համար՝ սեն-  
եակի պատերուն վրայ, այն տեղ ինչ գոյն որ  
տեսնուի, այն է ձեզ վայելուչ գոյնը :

Լա Նարիւռ

Ծ Ի Ծ Ա Ղ

Հինգշաբթի իրիկուն կէնսինէ խա-  
թունը իր թռուանը ըսաւ .

— Ծօ Գառնիկ, Կաղանդուան համար  
չի մոռնաս ինձի բտրճիք մը էնֆիլիյէ  
պիտի բերես :

— Մամիկ, դուն միեչև հիմա էնֆիլիյէ  
չէիր քաշեր, նոր մասրաֆի դո՞ւռ պի-  
տի բանանք :

— Ձէ, չէ, մինակ Կաղանդուան հա-  
մար է . չի բերես նէ սիրտս բէք պիտի  
կտորի :

— Թօհաֆ չէյ, ատխտար պէտքի՞  
բան է :

— Հա եա՛, տարիքս հանեմ տէյի քի-  
թըս պիտի քաշեմ :

— Անանկ է նէ քիչ մը սև պիպեռ  
քաշէ . ան ալ անոր տեղը կը բռնէ :

Մայրը — Գա աղջիկներ, միտքս ի-  
քէն ըսեմ, Կաղանդին գիշերը բար-

ձերնուզ տակ մէյակէկ կտոր սիմիթ դը-  
նելը չի մոռնաք .

Տղան — Ատ ի՞նչ ըսել պիտի ըլլայ .


— Գուն մի խառնուիր . աղջիկ խըս-  
մին կաղանդին գիշերը սիմիթին կտո-  
րը բարձին տակը դնէ նէ՛ նշանածը ո՞վ  
պիտի ըլլայ նէ երազը կուգայ :

— Աստուած շատ քսիչել չի տայ . սի-  
միթին կտորը բարձին տակը դնելէ  
ետքը ես ըսեմ քեզի թէ ո՞վ պիտի գայ :

— Էյ աննման, ըսէ նայիմ, ո՞վ . . .

— Կամ մուկը կամ կատուն :

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ



Առաջին անսխալ կարգացողին նուէրն  
է կատակերգութիւն մը :

Թիւ 142 «Հայելի»ի նկարհանուկը  
կարդալ այսպէս .

«Հօրը պատիժն է անառակ որդին»  
Ս. Ս.

ԿԱՂԱՆԴԻ և ԾՆՈՒՆԴԻ ԱՌԹԻՒ

Ինամօք պատրաստուած ապուխտ,  
երչիկ, լիքօրինօզ ձուկ, ամեն տեսակ նը-  
պարեղենք և մրգեղենք ընտիր տեսու-  
կէն կը վաճառին Մուսալլա Տ. Եւագրի  
Կիւմիւշճեանի վաճառատունը: Յաճա-  
խօրդք անպատճառ գոհ պիտի մնան թէ  
ապրանքներէն և թէ գիներու չափա-  
ւորութենէն:

# Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Ա. Փ. ԲԻԿԵՒԻ ԽՈՐԵՐԷՆ



ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐՈՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՌԱՆԿԱՆՏԱՅԻ ԵՐ ՊԱՏԻՆԵՅԻՆ ԿԴՂԻՒՆ ՎՐԱՅ

«Արևելք»ի Պաղտատի թղթակիցը կը հաղորդէ հետեւեալ շահեկան նօթերը Պահրէյն կղզիէն և Ուկանտայէն վերադարձող երկու հայերու ժխլվէնական ճամբորդութեան վրայ :

«Այս ամիս Պաղտատցի երկու ազգայիններ պանդխտութենէ վերադարձան իրենց ընտանեաց ծոցը: Մէկը կը գտնուէր Պահրէյն կղզին՝ Պարսից ծոցին մէջ ութը ամիսէ ի վեր, իսկ միւսը Ափրիկէի խորերը՝ Ուկանտա ուր մնաց երեք տարի :

Առիթ ունեցանք տեսնուիլ այս երկու պարոններու» հետ և հետաքրքրական տեղեկութիւններ առնուլ այս քիչ ծանօթ կամ գրեթէ անծանօթ երկիրներուն վրայ զորս կը փութամ հաղորդել :

Պահրէյն կը բաղկանայ երեք կղզիներէ, մէկը ամենէն մեծ՝ որուն շրջանը կարելի է ընել հիտիոտն երեք օրուան մէջ, իսկ միւս երկու կղզիները շատ փոքրր են: Իրենց դիմացն է արեւմտեան կողմէն օսմ. եզերքը Հասսէ և Քաթրիփ աւաններով ուր եթէ հովը յաջողակ ըլլայ մարդ կարող է առագաստանաւով 3 4 ժամէն հասնիլ, իսկ առանց հովի 2 3 օրէն հոպիւ: Արևելեան կողմն է Պարսից եզերքը որ շատ աւելի հեռու է :

Մեծ կղզիին ժողովուրդը 20 հազարէ աւելի կը հաշուեն եւ իրենց գլխաւոր զբաղումն է ծովէն մարգարիտ եւ գաղտակուր հանել, որոն ամենալաւ տեսակը կը գտնուի հոն, ամեքն այլ յաջողակ սուղակներ են եւ կարող են քանի մը ժամ ջուրի տակ մնալ: Իսկ փոքր կղզիին ժողովուրդը իրեն յատուկ մասնագիտութիւն ըրած է խառնիճ (fարիսէս) որսալ զոր խաշելով կը զրկեն Պաղտատ և Պասրա :

Հողը պտղաբեր է, Բայց երկրագործութիւնը խիստ յետնեալ վիճակի մէջ, որովհետեւ, ինչպէս ըսինք, ժողովուրդը մարգարիտ հանելով կապրի եւ բնաւ հողչի տանիր մշակութեան: Ուստի բանջարեղէն շատ քիչ կը գտնուի եւ մէկ ամբուկը մինչեւ երեսուն փարա ծախուած է :

Պահրէյն կղզիներուն մէջ է՛ն գլխաւոր քաղաքն է Մէնամէ որ ունի 10,000 բնակիչ: Հոն կան քանի մը սրճարաններ եւ խանութներ, շուկայ մը ուր կը ծախուին կենաց ամենէն հարկաւոր պիտոյքը եւ խիստ սակաւ Եւրոպական ապրանք: Տուները միայարկ են, խիստ քիչերը երկյարկ, ծոխային խիճերէ եւ ցեխէ շինուած: Հեռագիր չիկայ, ոչ ալ հաղորդակցութեան ուրիշ միջոց, բացի անգլիական շոգեխառններէ որոնք տասնըհինգ օրը անգամ մը հոն կը հանդպին նամակ եւ ապրանք տալու կամ առնելու համար, բայց եզերքը ծանծաղ ըլլալով նաւը կը ստիպուի մէկ ժամ հեռու կենալ եւ նաւակներու միջոցաւ հաղորդակցիլ կղզիին հետ :

Ժողովրդեան սիրելի կերակուրներն են բրինձ, խառնիճ եւ խաշած մարախ, Յովհաննէս Մկրտչի նախասիրաց խորտիկը, նաեւ առաստ արմաւ, որուն աւելորդը կը զրկեն Եւրոպա եւ մինչեւ Ամերիկա: Արմաւներու մէջ կայ տեսակ մը որ որչափ ծառի վրայ կենայ՝ չի հասնիր, ուստի խակ վիճակի մէջ քաղելով եռացեալ ջուրի մէջ կեփեն ուտելու համար եւ կը կոչուի խոյայ մաքսպուխ (խակ եփուած) :

Մեծ կղզիին մէջ է անգլիական հիւպատոսը եւ Ամերիկացի քարոզիչը, նաեւ հիւպատոսարանի բժիշկը եւ Ս. գրոց զբաղաւառներ որոնք աղատօրէն կը քարոզեն ժողովրդեան մէջ, թէեւ ցարդ ոչ մեծ յաջողութեամբ: Օգր շատ տաք է, այնպէս որ ամառ ժամանակ, մանաւանդ յուլիս ամսոյ մէջ, տաքութիւնը կը հասնի մինչեւ 52—54 աստիճան հարիւրամասն ջերմաչափով, իսկ ձմեռը սաստիկ խոնաւութիւն կը տիրէ :

Նուկաներու և փողոցներու մէջ այրերէ աւելի կիներ կերևան քողով ծած-

կուած որոնք կ'առնեն, կը ծախեն եւ ամէն քր հաւ, հաւկիթ, մածուն, արմաւ և չն կը բերեն քաղաք ծախելու կղզիին այլևայլ կողմերէն ուր կը բնակին խրճիթներու տակ: Ոչխար չի կայ կղզիին մէջ, այլ միայն այժ զոր քիչ անգամ կը մտրթեն: ուստի ուսելու միտը սուղ է այնտեղ:

Մեր երկրորդ անգահիցը սպայէս կը պատմէ իր ուղևորութիւնը: Ասկէ շատ տարիներ առաջ Պոմպայ գացած և հոն ուսումը վերջացրնելով այնինչ վարժարանէն ելած էր, պատահեցաւ կառավարական գործակալներու որոնք մարդ կը փնտռէին Ափրիկէի ներսերը տանելու ամէն տեսակ պաշտօնի համար. ինքն ալ արձանագրուեցաւ եւ Պոմպայէն նաւ մտնելով Մէլէի տան կղզիներու ճամբով 12 օրուան մէջ հասաւ Ափրիկէի արևելեան եզերաց վրայ Մոմպասա քաղաքը:

(Շար.)

ԱՁԳ

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք «Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւնի և Վարդան Մամիկոնեան» բնական դործին տպագրութեանը զիւրութիւն մը սուած ըլլալու համար այժմէն բաժանորդագրութիւն մը բացուած է. փափաքողները թող աածին իրենց հասցէները ու բաժնեգիրը (2 Փր.) զրկել հեղինակին հասցէին.

Արտաշէս Կարապետեան (բոսթ աէսթանգ) Հոււմլա:

Հրատարակութենէ վերջը սոյն գիրքը պիտի ծախուի 2, 70 սանդիմի:

1—10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գայլ Վահան» սղբերգութեան հանգուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը:

Գինն է 1 Փրանք: Կեդրոնատեղին Վանա Արևելեան տպարան: Օննիկ Բարսեղեան:



ՆԵՐՍԷՍ ԽԱՉԻԿԵԱՆ

և

ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵԱՆ

ՈՍԿԵՐԻՉ

Հայոց Եկեղեցիին գիմաքը, Վանա:

Ոսկերչութեան վերաբերեալ ամեն տեսակ յանձնարարութիւններ կը կատարուին գոհացուցիչ պայմաններով. արծաթի և ոսկիի վրայ ծաղկագիր փորագրութիւններ, ինչպէս նաև շատ ձեւով մատանիներ, օղեր և ապարանջաններ կը պատրաստուին: Ամէն յանձնարարներ արդէն գոհ մնացած են այս երկու վարպետներէն:

ՄՈՒՀԻՄ ԻԼԱՆ

Մինկեր Փապրիքասը մամուլութեան 13,660,051 նոմէրօլու պիր ատէտ տիրիչ մաքինասը Վարնատա Գատըրր Պապա մահալէսինտէ 1364 նոմէրօլու խանէտէ սաքին պիչարէ պիր գատընըն մալի օլարագ թարիխտէն 10 կիւն մուգատտէմ սըրգաթ. օլուն մուշ օլուպ, կէրէք Վարնատա վէ կէրէք էթրաֆ քէջլէրինտէ պուլունան ինսանիյէթ բէրվէր էհալինին պալատէ զիբր օլունան նօմէրօտա պիր մաքինա կէօրտիւքլէրինտէ կազէթամըզ իտարէ խանէսինէ խապեր վէրմէլէրի խասսէթէն մէրճու վէ իսթիրհամ օլունուր:

Մոխակիրին 10 Փրանք իբրամիյէսի վար տըր:

Отговорница М. Сконовь  
Печальница „Взаимность“ — Варна.